ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ՈՐԳԱՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՄԼԿՅԵՄ ԲՈԼՈՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒ-
ԹՅՈՒՆՆԵՐԻՆ

ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ ՅԵՐԵՎԱՆ 1937

3 1 JAN 2018

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք։

ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ՈՐԳԱՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՄԼԿՅԵՄ ԲՈԼՈՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

«Ի՞նչ է նշանակում ճիշտ ընտրել աշխատողներին և նրանց ճիշտ դասավորել աշխատանքի մեջ:

Այդ նշանակում է աշխատողներին ընտրել նախ քաղաքական հատկանիշով, այսինքն՝ ինչքանով արժանի՞ յեն արդյոք քաղաքական վստահության և յերկրորդ՝ գործնական հատկանիշով, այսինքն նրանք պիտանի՞ յեն արդյոք այսինչ կոնկրետ աշխատանքի համար»:

ՍՏԱԼԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՍՍԱՐ
1-3680գր

1. Կոմյերիտական որդանների ընտրությունները կատարելիս անհրաժեշտ է խստորեն ղեկավարվել Համ. ԼԿՅԵՄ Կենտկոմի 3-րդ պլենումի հետևյալ վորոշումով.—

«Կոմյերիտական որդանների ընտրությունների ժամանակ արգելել ցուցակով քվեարկությունը: Քվեարկությունը կատարել յուրաքանչյուր առանձին թեկնածության համար, ապահովելով կոմյերիտականներին՝ թեկնածուներին մերժելու և վերջիններիս քննադատելու անսահմանափակ իրավունք:

Կոմյերիտական որդանների ընտրությունների ժամանակ, սկսած սկզբնական կազմակերպության կոմիտեի ընտրություններից մինչև Համ.ԼԿՅԵՄ Կենտկոմի ընտրությունն-

ները, սահմանել փակ (դաղտնի) քվեարկություն»:

2. Փակ (դաղտնի) քվեարկությամբ ընտրվում են.—

ա) Խմբակների կազմակերպիչները, ցեխային, հերթափոխային, յենթաշրջանային, ֆակուլտետային կոմյերիտական կազմակերպությունների բյուրոների անդամները և կոմյերիտական կազմակերպիչները, կոմյերիտական սկզբնական կազմակերպությունների կոմիտեների անդամները և քարտուղարները (այնտեղ, ուր չկան կոմիտեներ), շրջկոմների, քաղկոմների, ոկրուգային կոմիտեների, մարզկոմների, յերկրկոմների, ազգային հանրապետությունների ԼԿՅԵՄ կենտկոմների պլենումների անդամները և վերատուչիչ հանձնաժողովների անդամները:

բ) Ցեխային, հերթափոխային, յենթաշրջանային, ֆակուլտետային կոմյերիտական կազմակերպությունների բյուրոների քարտուղարներն ընտրվում են բյուրոների նիստերում: Կոմյերիտական սկզբնական կազմակերպությունների կոմիտեների քարտուղարները, շրջկոմների, քաղկոմների, ոկրուգային կոմիտեների, մարզկոմների, յերկրկոմների, ազգային հանրապետությունների ԼԿՅԵՄ կենտկոմների բյուրոների քարտուղարներն ու անդամներն ընտրվում են համապատասխան կոմիտեների պլենումներում:

գ) Շրջանային և քաղաքային կոմյերիտական կոնֆերանսների պատգամավորները, ընտրված կոմյերիտական սկզբնական կազմակերպությունների կողմից և կոմյերիմիության մարզային, յերկրային և հանրապետական համագումարների պատգամավորները, ընտրված շրջանային, քաղաքային և ոկրուգային կոմյերիտական կոնֆերանսների կողմից:

3. Ընտրությունները կատարելուց առաջ կոմյերիտական ժողովը, կամ կոնֆերանսը բաց քվեարկությամբ սահմանում է ընտրվելիք կոմյերիտական օրգանների անդամների և թեկնածուների քանակը:

Սկզբնական կազմակերպությունների կոմիտեների կազմը սահմանվում է ժողովում, վոչ ավելի քան 11 հոգուց:

4· Կոմյերիտական որդանի նոր կազմի համար թեկնածուներն առաջադրվում են կոմյերիտականների կողմից և անհատապես քննարկվում են անմիջականորեն կոմյերիտական ժողովում, կամ կոնֆերանսում (կոմյերիտական կոմիտեյի անդամության և թեկնածության համար առանձին-առանձին)։

Արգելվում է նախապես կազմել և քննարկել ցուցակներն առանց կոնֆերանսի (ժողովի) պլենար նիստի։

Այն բոլոր թեկնածուների քննարկումը, վորոնք առաջադրված են կոմյերիտական որդանի կազմի համար, տեղի յե ունենում այն կարգով, ինչ կարգով նրանք գրանցված են ՀամԼԿՅԵՄ կոնֆերանսի կամ կոմյերիտական ժողովի նախագահության մեջ նրանց ստացվելու հաջորդականությամբ։

5· Թեկնածուների անհատական քննարկման ժամանակ պետք է ապահովվի կոմյերիտական որդանի համար առաջադրված թեկնածուների մերժման անսահմանափակ իրավունքը, այսինքն՝ կոնֆերանսի յուրաքանչյուր պատգամավոր կամ ժողովի մասնակից կարող է մերժել առաջադրված թեկնածուների ամեն մի քանակ և յուրաքանչյուր առաջադրված թեկնածության մասին կարող են արտահայտվել անսահմանափակ քանակությամբ պատգամավորներ, թե՛ «թեր» և թե՛ «դեմ»։ Առաջադրված թեկնածուների քննարկումը դադարեցնելու հարցը վճռում է կոնֆերանսը կամ ժողովը։

6· Կոմյերիտմիության մեջ ընտրությունների ժամանակ ընտրելու և ընտրվելու իրավունքով ոգտվում է ՀամԼԿՅԵՄ յուրաքանչյուր անդամ, անկախ նրա հասակից։ Խորհրդակցական ձայնի իրավունքից ոգտվում են միայն ՀամԼԿՅԵՄ անդամության թեկնածուները։

7· Թեկնածությունները քննարկելուց հետո, վորոնց դեմ մերժումներ են ստացված, անհրաժեշտ է յուրաքանչյուր առանձին դեպքում բաց քվեարկության կարգով վճռել, թե արդյոք տվյալ թեկնածությունը պե՞տք է մտցնել կամ չմտցնել այն ցուցակի

մեջ, վոր կազմում է կոնֆերանսը կամ ժողովը, փակ (գաղտնի) քվեարկությամբ կոմյերիտական որդանների ընտրությունները կատարելու համար: Այս դեպքում անհրաժեշտ է հաշվել բոլոր ձայները, վորոնք տրվում են թե՛ հոգուտ մերժման և թե՛ այդ մերժման դեմ: Այն թեկնածուությունը, վորի դեմ մերժում չի ստացված, առանց քվեարկության մտցվում է ցուցակի մեջ: Կոմյերիտական ժողովում կամ կոնֆերանսում քվեները հաշվելու համար բաց քվեարկությամբ ընտրվում են հատուկ հաշվարարներ:

Փակ (գաղտնի) քվեարկության համար կազմված ցուցակների վրա չպիտի լինի վորևե նշում—կամ ջնջված տեղ և դրանք չպետք է համարակալվեն:

8. Կոմյերիտական որդանների և կոնֆերանսների պատգամավորների ընտրությունները կատարելուց առաջ, փակ (գաղտնի) քվեարկության արդյունքները հաշվելու համար կոմյերիտական ժողովը կամ կոնֆերանսը բաց քվեարկությամբ ընտրում է հաշվային հանձնաժողով, այն

քանակությամբ, վոր սահմանում է ժողովը կամ կոնֆերանսը:

Քվեարկությունից առաջ հաշվային հանձնաժողովի նախագահը պարտավոր է ժողովի մասնակիցներին, կոնֆերանսի պատգամավորներին ծանոթացնել փակ (գաղտնի) ընտրությունների կատարման վերաբերյալ ՀամԼԿՅԵՄ Կենտկոմի տվյալ հրահանգի հետ:

Հաշվային հանձնաժողովը փակ (գաղտնի) քվեարկությունից առաջ պարտավոր է պատրաստել ընտրական տուփեր, ստուգել դրանք և կնքել կամ փակել կողպեքով:

9. Կոմյերիտական որդանների ընտրությունների ժամանակ փակ (գաղտնի) քվեարկությունը պետք է կատարվի կոմյերիտական գոնփակ ժողովում կամ ՀամԼԿՅԵՄ կոնֆերանսի գոնփակ նիստում:

Այդ ժողովին կամ նիստին չեն թողնվում ՀամԼԿՅԵՄ անդամության թեկնածուները և խորհրդակցական ձայն ունեցող պատգամավորները:

10. Ցուրաքանչյուր պատգամավոր կամ ժողովի մասնակից, վորոնք ունեն վճռական

ձայնի իրավունք, ստանում են այն թեկնածուների ցուցակից մի որինակ (տպագիր կամ ձեռքով մաքուր ու խնամքով գրված), վորը կոմյերիտական ժողովում կամ կոնֆերանսում նշված է կոմյերիտական որգանի համար։ Պատգամավորների մանդատում կամ կոմյերիտական ժողովին ու կոնֆերանսին ներկա գտնվող ՀԱՄԼԿՅԵՄ անդամների ցուցակում պետք է արվեն նշումներ այն մասին, թե ժողովի մասնակիցը կամ կոնֆերանսի պատգամավորը մասնակցել է քվեարկությանը։

Հաշվային հանձնաժողովը պարտավոր է հետևել, վորպեսզի թեկնածուների ցուցակի բաժանված որինակների քանակը հավասար լինի քվեարկությանը մասնակցողների քանակին։

11. Ժողովի յուրաքանչյուր մասնակից կամ կոնֆերանսի պատգամավոր փակ (գաղտնի) քվեարկության ժամանակ իրավունք ունի թեկնածուների ցուցակում ջնջել թեկնածությունները կամ ավելացնել վորևե քանակությամբ նոր թեկնածուներ կոմյերիտական որգանի կազմի համար, թե ժողովի կամ կոնֆերանսի կողմից քննված թեկնածուներից և թե՛ կոմյերիտմիության ամեն մի անդամի ված թեկնածուներից։

Փակ (գաղտնի) քվեարկության ցուցակները պետք է լինեն առանց նշումների և առանց համարակալության և չպետք է ստորագրվեն քվեարկողի ազգանունով։

12. Քվեարկությունից հետո հաշվային հանձնաժողովը հայտարարում է ընդմիջում և սահմանում է այդ ընդմիջման ժամանակը, բաց է անում ընտրական տուփերը և առանց չենքից դուրս գալու, վորտեղ տեղի յե ունենում ժողովը կամ կոնֆերանսը, կատարում է քվեարկության արդյունքների հաշիվը, կոմյերիտական որգանների անդամների համար առանձին և կոմյերիտական որգանների անդամության թեկնածուների, ինչպես նաև կոնֆերանսի համար ընտրված պատգամավորների համար առանձին։

Հաշվային հանձնաժողովը պարտավոր է հաշվել յուրաքանչյուր առանձին թեկնածության վերաբերող «թեր» և «դեմ» յեղած քվեները։ Քվեները հաշվելուց հետո

հաշվային հանձնաժողովը կազմում է արձանագրություն, վորի մեջ գրանցվում է յուրաքանչյուր առանձին թեկնածության վերաբերող քվեարկության արդյունքը և հանձնաժողովի բոլոր անդամներն ստորագրում են այդ արձանագրությունը:

Այն չենքում, վորտեղ տեղի յե ունենում քվեների հաշվումը, բացի հաշվային հանձնաժողովի անդամներից, վոչ վոք իրավունք չունի գտնվել:

13. Հաշվային հանձնաժողովն ընդհանուր ժողովում կամ Համ. ԼԿՑԵՄ կոնֆերանսի պլենար նիստում զեկուցում է յուրաքանչյուր առանձին թեկնածության վերաբերող քվեարկության արդյունքների մասին: Կոմյերիտական որգանների կազմի մեջ ընտրվածներ են համարվում այն թեկնածությունները, վորոնք ստացել են ձայների մեծամասնություն, սակայն վոչ պակաս, քան վճռական ձայնի իրավունք ունեցող և ժողովին ներկա յեղած՝ Համ ԼԿՑԵՄ անդամների կամ կոնֆերանսի պատգամավորների կեսը:

14. Փակ (գաղտնի) քվեարկության բոլոր նյութերը (թեկնածուների ցուցակները, գրավոր հայտարարությունները, ձայների հաշիվը, հաշվային հանձնաժողովի արձանագրությունները) պետք է պահպանվեն կոմյերիտական որգաններում, ինչպես գաղտնի փաստաթղթեր:

ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԼԵՆԻՆՅԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՑԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Գլավլիտի լիազոր Հ— 5611
Պատվեր 871
Տիրաժ 3000

20

304
25 ИЮН. 1937
1
3680